Լեռ Կամսար

Շվեյցարիա և Հայաստան

Ինչպես որ Զվիցերիո մեջ գերմանացիք, ֆրանսիացիք և իտալացիք կկազմեն դաշնակցական պետություն մը, անանկ ալ Հայաստանի մեջ դաշնակցականները, ռամկավարներն ու հնչակյանները կկազմեն դաշնակցական ազգություն մը, ազգային բոլոր հարցերու մեջ միանգամայն ավտոնում:

Այն օրվնե, երբ գոյություն ունեն այս կուսակցությունները, տեսնված չէ համազգային հարց մը, որ տեղե մը ճամփա ինկած՝ անարգել իր նպատակին դիմած ըլլա:

Կուսակցություն մը ազգին համար բան մը կշինե, բայց անկարելի է, որ այդ շինված բանը գործադրության դրվի, ինչքան ալ օգտակար ըլլա. ո՛չ, պետք է բերես մյուս երկու կուսակցություններու առջևեն անցունես, անոնք ալ ձեռները շինված բանին վրա քսեն, որ նո՛ր վավերական սեպվի:

Զինվորագրությունն այն միակ հարցն է, որ սխալմամբ կկարծեի, թե համազգային պիտի ըլլար ու բոլոր կուսակցություններն իրենց քիթերը վեր բռնելով, թող պիտի տային, որ այս հարցն անարգել անցներ իր գործին երթար:

Բայց այդպես չեղավ:

Երևանի մեջ թուրքահայ զինվորագիր ատյան մը կա, որու անդամները Արևմտահայ խորհուրդեն բխյալ կուգան և կազմված են դաշնակցականներե և ռամկավարներե:

Ու հնչակյաններ չկան:

Տե՛ր, դու փրկես-ազատես...

Էֆենդիմ, սա հնչակյանները, որոնք գրպանի փոշու նման մինչև գրպանը չշրջես՝ չեն երևար, հրապարակ իջան ու պահանջեցին զինվորագիր ատյանին մեջ տեղ մը:

-Տեղ չունինք,- ըսին:

-Ինչո՞ւ:

-Վասնզի ձեր կուսակցությունն ընդամենը 17 հոգիե կբաղկանա:

Այս լսելով հնչակյանները ետև դարձան ու պոռացին.

-Պրոլետարնե՛ր բոլոր երկրներու, միացե՛ք:

Միացան:

Ու դեռ 17-են բան մըն ալ պակաս դուրս եկավ: Ասոր վրա գացին եկան, եղածին բան մըն ալ ջուր զարկին ու վերջապես իրենց թիվը 17-ի հասցնելով՝ տեղ պահանջեցին և... ստացան:

***

Իսկ ես կբողոքեմ:

Հայ ազգն երկու միլիոն է: 17-ը երկու միլիոնի մեջ 117, 710 անգամ կա ու դեռ տաս ալ կավելանա: Եթե տասնյոթանոց կուսակցություն մը իրավունք ունենա տեղ մը պահանջելու, այն ատեն զինվորագիր ատյանը պիտի բաղկացած ըլլա 117,710 անդամներե ու 10 փոխանդամներե: Թող տալով, որ այսքան միայն գրելով զբաղվեն, նախ գրիչ չի բավեր, երկրորդ իբրև ճակատ մեկնողներ, մեր դեմ պիտի ունենանք ծերեր, կանայք ու երեխաներ... միայն:

Այս օրենքին հիման վրա ի՞նչ կըսեք ինձ, որ վաղն իսկ երթամ աներոջս, քեռիիս, փեսայիս, քավորիս դռները ծեծեմ ու հինգ քույրերուս հետ վաթսուններոց կուսակցություն մը կազմեմ ու Ատյանին առաջը գալով՝ երկու տեղ պահանջեմ:

Ա՛, պիտի ըսեք խելքը գլխին մարդ չունիս:

-Մարդ չունիմ քե՞զի ինչ. մարդ չունիմ՝ ձող մը կտնկեմ Ատյանին մեջ կդառնամ. տեղը իմս չէ՞, խնդիրը սկզբունքի՞ն վրա է, թե մարդու:

***

Ի տես կուսակցության մը այս անձնուրաց աշխատասիրության, միտքս կուգա հետևյալ միջադեպը, որ վերջաբանի փոխարեն կուզեմ պատմել:

Այգետեր մը երկու մշակ վարձելով՝ այգին փորելու կղրկե: Կեսօրին այգին գալով, կտեսնե այգին բնավ փորված չէ ու մշակները քանի մը քայլ իրարմե հեռու, կոնակներուն վրա պառկած երկինքը կնայեն:

-Ինչ՞ ես ըրեր այսօր,-կհարցնե այգետերը մոտենալով առաջին մշակին:

-Ոչին՛չ,- կպատասխանե մշակը առանց ծածկելու:

-Դո՞ւն ինչ ես ըրեր,- կհարցնե այգետերը երկրորդ մշակին:

Սա, որ չէր լսած, թե ինչ էր պատասխաներ իր ընկեր մշակը՝ կպատասխանե՝

-Տե՛ր, իսկ ես կօգնեի ընկերոջս...

1918թ.